

ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻՔԱՆ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐՔ
ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ
ՀԱՄԱՐ



491.99-3
2-47

ՀԱՅԵՐԵՎԱՆ

51

491.99-5

Ղ-47

ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻՔՅԱՆ

04 MAY 2010

ՀԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐԻՔ

ԵՐԿՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀԱՍՏԱՑՎԱԾ Է ՀՍՈՒ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՏԵ

ՈՒՑԵՐՈՐԴ ՀՐԱՅԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ




Հ Ա Յ Պ Ե Ց Հ Ր Ա Ց
Ե Ր Ե Վ Ա Ն 1951


1.9 JUN 2013

6702

1. ԽՈՍԷ



Ա. ԳԱՐԻԲՅԱՆ
 ՄԱՍԻՆԻՔ ԱՐՄՅԱՆՍԿՈՂ ԻՅՅԻԿԱ
 ԴՅԱ 2-ԴՈ ԿԼԱՏՏԱ
 ՆՎԱԴԱՆՆԵ ՎՈՏՄՈՅԵ
 Այնտրատ, Երեւան, 1951



Պատկեր:

ՀԱՆՈՒՆ ՍՏԱԼԻՆԻ

Վանյան տասներկու տարեկան էր: Նրանց գյուղը գրավել էին ֆաշիստները: Վանյան կորցրել էր իր ծնողներին և ապրում էր պարտիզանների մոտ:

— Կարմիր Բանակը մոտենում է, — ասաց մի օր պարտիզանների հրամանատարը, — պետք է թույլ չտալ ֆաշիստներին փախչելու:

Մի անգամ Վանյան անտառի խորքում հանդիպեց փախչող գերմանական զինվորների մի խմբի, որ կորցրել էր ճանապարհը:

— Մեզ ցույց տուր գյուղի ճանապարհը, — հրամայեց գերմանացի սպան:

Վանյան առաջ ընկավ, ֆաշիստները հետևեցին նրան: Երբ մոտեցան պարտիզանների կայանին, Վանյան նետվեց մացառների մեջ, գոչելով պարտիզանական ազդանշանը:

— Հանձն Ստալինի:


Գերմանացի սպան կրակեց Վանյայի վրա, բայց վրիպեց: Պարտիզանները շրջապատեցին գերմանացիներին, շատերին ոչնչացրին, մի քանիսին էլ բռնեցին:

Պատմեց՞ք կարդացած հոդվածի բովանդակությունը՞:

Խոսքը կազմված է նախադասություններից: Նախադասությունը միտք է արտահայտում:

2. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 1: Ո՞վ ի՞նչ է անում: Պատմեցի՞ք:



Ուսուցչուհին բացատրում է:

Աշակերտուհիները լսում են:

Այստեղ կա երկու նախադասություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 2: Կազմեցե՛ք երեք նախադասու-
թյուն:




Արան (խնչ է անում) Արևը (խնչ է անում)
Սեղան (խնչ է անում) Օրը (խնչ է լինում)
Բանվորը (խնչ է անում) Օդը (խնչ է լինում)

(Կարդում է, գրում է, (Փպտում է, երկարում է,
աշխատում է) տաքանում է)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 3: Կազմեցե՛ք երեք նախադասու-
թյուն:

..... (նվ) գրում է: (խնչը) ժպտում է:
..... (նվ) խաղում է: (խնչը) երկարում է:
..... (նվ) վազում է: (խնչը) տաքանում է:
(Արփիկը, Շուշիկը, Շողիկը) (Արևը, օրը, օդը)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 4: Կազմեցե՛ք նախադասություններ:
Ո՞վ ի՞նչ է անում:



Շունը հաչում է:

(տունում է, խրխնջում է, բառաչում է, մայում է,
մրավում է, կշկշում է, մռնչում է)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 5: Կազմեցե՛ք նախադասություն-
ներ:


Ի՞նչը ի՞նչ է անում կամ լինում:



Խաղողը հասնում է:

(ծաղկում է, բացվում է, լցվում է, դեղնում է,
կարմրում է)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 6. Լրացրեք նախադասութիւնները:



Ձին արածում է... (որտեղ): Մեզուն շինում է... (ինչ):
 Կատուն բռնում է ... (ինչ):

(դաշտում, մուկ, մեզր)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 7. Լրացրեք նախադասութիւնները:

Աշակերտները խմբերով գնում են... (մէջ):

Ուսուցիչը դասարանում բացատրում է... (ինչը):

Համիկն ու Սեդան դաշտում... (ինչ) են քաղում:

(գալթոց, դասը, ծաղիկ)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 8: Արտագրեցեք առանձին նախա-

դասութիւնները. մի կամ ինչը ինչ է անում կամ լի-
 նում:

Գտե՛ք. ԱՅԴ ԵՐՐ Է ԼԻՆՈՒՄ

- | | |
|---------------------|---------------------|
| 1. Օրն է երկարում, | 3. Օրն է կարճանում, |
| Օրն է տաքանում, | Ծառն է մերկանում, |
| Դաշտերն են ծաղկում, | Անձրև է մազում, |
| Թռչունն է երգում: | Քամին է խաղում: |
| — Այդ երբ է լինում: | — Այդ երբ է լինում: |
| 2. Արևն է այրում, | 4. Դաշտերն սպիտակ |
| Ցորենն է հասնում, | Բուքն է հեծեծում, |
| Թոռն է չորանում, | Սառույցով ծածկված |
| Հասկերն են լցվում: | Գետերն են լուռ: |
| — Այդ երբ է լինում: | — Այդ երբ է լինում: |
- Օրինակ՝ օրը երկարում է:

Կարգալիս նախադասութիւն վերջում դա-
 րար ենք տալիս:
 Գրելիս նախադասութիւն վերջում գնում
 ենք վերջակեա:

Վերջակեալից հետո սկսում ենք մեծատառով:
 ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 9: Արտագրեցեք և գրեք վերջակեա-

Միտեր եկաւ միգերը հա-
 սան Անտրաները դեղնեպին Կոյ-
 րմարտաբոյունը հասկախում է
 րերի Թռչունները չվում են
 դեպի փայլ երկրներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 10: Արտագրեցեք: Վերջակեալից
 հետո չմոռանաք սկսել մեծատառով:

մեկ րոյորս սիրում ենք
 մեր Առօրեականը հայրենիքը:
 Առօրեականը բանակը պաշտ-
 պանում է մեր սիրելի հայրե-
 նիքը ցամաքներին:
 Բոգորս ցամաքանում ենք պիտ-
 ները գառնայ:

ՀՆԱՐԱՄԻՏ ԱՇԻԿԸ



Տարվա իր եղանակն էր:
Ի՞նչ էին անում երեխաները:
Ի՞նչ մտածեց Աշիկը:
Ինչո՞ւ Աշիկը շնիկը լծեց սահնակին:
Ի՞նչ պատահեց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 11: Գրավոր պատասխանեցե՛ք հարցերին և կազմեցե՛ք շարադրություն: Քանի նախադասությունից է կազմված ձեր շարադրությունը:




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 12: Գրավոր պատասխանեցե՛ք:

1. Ո՞ւր են գնում երեխաները:
2. Ի՞նչ են անում անտառում:
3. Ի՞նչ պատահեց:
4. Որտե՞ղ պաշտպանվեցին երեխաները անձրևից:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 13: Հարցերին պատասխանելով կազմեցե՛ք շարադրություն: Դրե՛ք վերնագիր:

Նախադասութիւնը կազմված է բառերից:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 14: Ուշագիր կարդացե՛ք: Յուրաքանչյուր նկարի համապատասխան գտե՛ք մի նախադասութիւն:



ՀԵՐՈՍ ՏՂԱՆ

Սլաքավարի որդի Սաքոն ստուգում էր երկաթուղու գիծը: Հեղեղը մի տեղում փչացրել էր գիծը: Սաքոն լսեց հեռվից մոտեցող գնացքի ձայներ: Սաքոն անմիջապես իր կարմիր վզկապից մի դրոշակ պատրաստեց: Կարմիր դրոշակը ձեռքին նա կանգնեց գծի մեջտեղը: Մեքենավարը նկա-

տեց: Նա կանգնեցրեց գնացքը Սաքոյից մի քանի քայլ հեռու: Հերոս տղան գնացքը փրկեց խորտակումից:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 15: Գտե՛ք՝ քանի բառից է կազմված ամեն մի նախադասութիւն:

3. ԲԱՌ ԵՎ ՎԱՆԿ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 16: Գտե՛ք՝ քանի բառ կա այս նախադասութիւնի մեջ.


Մեծ սավանն սպիտակ
Դաշտերն առավ ձյունի տակ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 17: Կազմեցե՛ք նախադասութիւններ չորս բառից, երկու բառից, երեք բառից, հինգ բառից...

Բառերը լինում են միավանկ և բազմավանկ: Միավանկ բառեր՝ պատ, քար, տուն: Բազմավանկ բառեր՝ կատու, ծաղիկ, դասարան:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 18: Անգիր սովորեցե՛ք: Արտադրեցե՛ք և հաշվեցե՛ք միավանկ բառերը, ապա բազմավանկ բառերը:

Մշնայես հուպէս այն մանկիկը
Պարեմուհին յարերես,
Երբ իր ջնոջի փունջ ծաղիկը
Դուսզնորդին նսիրեաց:



— Ընդունիր սերը մեր երկրի,
 Դու մե՛ր արև, դու մե՛ր հայր,
 Այս անթառամ ծաղիկների
 Անուշ բույրը կենսարար:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 19: Պատմեցե՛ք՝ ի՞նչ է նկարված:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 20: Անգիր սովորեցե՛ք: Հաշվեցե՛ք՝ քանի՞ վանկ ունի յուրաքանչյուր բազմավանկ բառ:

ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻՆ

Դու մի արև ես
 Աշխարհում արար,
 Որ լույս ես տալիս
 Կրեմլից մեր վառ:

Ու քո լույսի տակ
 Պայծառ, հրակեզ,
 Դառնում է հողը
 Չքնաղ մի պարտեղ:




Խնդության երգն է
 Հնչում մեր հողում
 Բախտի արևն է
 Մեզ վրա շողում:

Ու ես մի մանուկ՝
 Փոքրիկ, խանդավառ,
 Քեզ սերն եմ բերում
 Իմ խոր ու անմար:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 21: Արտագրեցե՛ք և հաշվեցե՛ք բազմավանկ բառերը: Քանի՞ վանկ ունի ամեն մի բազմավանկ բառ:

ԵՐԵՎԱՆ

Ծաղկում ես ազատ,
 Իմ նոր Երևան,
 Ճամփաներ ունես
 Գեղեցիկ ու լայն:



Քո փողոցներով
Անցնող ամեն մարդ
Զգում է իրեն
Ուրախ ու զվարթ:

Տրամվայները նոր
Անցնում են երգով,
Չան, իմ Երևան,
Հայն փողոցներով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 22: Գրեցե՛ք՝


Ո՛րն է Սովետական Հայաստանի մայրաքաղաքը:
Ո՛րն է Սովետական Միության մայրաքաղաքը:
Ինչո՞ւ ենք սիրում Մոսկվան ու Երևանը:

Վանկը կազմված է մեկ կամ մի քանի հնչյուններից:

Օրինակ՝ ա-սաց:

Առաջին վանկը կազմված է մեկ հնչյունից՝ ա՝
Երկրորդ վանկը կազմված է երեք հնչյունից՝ սաց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 23: Պատմեցե՛ք՝ ինչ է նկարված:




3530-51

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 24: Արտագրեցե՛ք՝ Հաշվեցե՛ք՝ մեն մի վանկի հնչյունները:

Հասնոյ ու աշ-գի վար-դա-րում,
Հով է իսա-դում՝ դաշ-փն-րում,
Քրո-չուն-նէրն են փնց գո-վում,
Ինչ նախ-չուն ես, լավ մա-յիս:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 25: Անդիր սովորեցե՛ք: Հաշվեցե՛ք
քանի՛ վանկ ունի ամեն մի սողը:



Ծ Ի Ծ Ե Ռ Ն Ա Կ

Խճկո-Ապեր

Դու կապուտակ ծովնով արի,
Թեթև, թեթև թևնով արի,
Ծովի փրփուր լանջով արի:
Գարնան երգով, կանչով արի:
Արի, արի, սիրուն ծիծեռ,
Արի, արի, գարուն դու բեր:

Սևիկ-մևիկ աչիկ ունես,
Մկրատաձև պոչիկ ունես.
Ծովի փրփուր լանջով արի,
Գարնան շնչով, կանչով արի:
Արի, արի, սիրուն ծիծեռ,
Արի, արի, գարուն դու բեր:

Ծիծեռնակով գարուն կգա,
Անծիծեռնակ գարուն չկա.
Ծովի փրփուր լանջով արի,
Գարնան շնչով, կանչով արի:
Արի, արի, սիրուն ծիծեռ,
Արի, արի, գարուն դու բեր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 26: Կարգացե՛ք ոտանավորը: Գտե՛ք՝
քանի՛ բաղձավանկ և քանի՛ միավանկ բառեր կան, քանի՛
վանկ ունի ամեն մի սողը:

ԱՌԱՎՈՏ


Ա. Ս. Գուլիբն

Բացվեց այգը արևելքում
շողալով,
Գետի այն կողմ լույսերն հանգան
զողալով:
Ծաղկանց վրա ցողը իջավ
գաշտերում,
Շարժվեց հոտը կանաչ, փափուկ
հանդերում:
Ճամփա ընկան մեզ ու մշուշ
զեպ ամպեր,
Սազերն ելան շորորալով
զեպ խոտեր:
Ջարթնեց գյուղը, մարդիկ դաշտ են
շտապում,
Ծաղեց արև, երկրին իջավ
խնդուլթյուն:

4 ՀՆՉՅՈՒՆ ԵՎ ՏԱՌ

Բառը կազմված է մեկ և ավելի հնչյուններից. օրինակ՝ ու, օր, դարուն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 27: Հաշվեցե՛ք, թե քանի հնչյուն ունի ամեն մի բառը:



ԾԱՂԻԿՆԵՐ

Ծաղիկները մեկ-մեկ բուսան
Հարյուր հազար գույնով ներկած
Լեռ ու հովիտ ծաղիկ դարձան,
Ծաղկանց ծովը մեզմեկ ծփաց:


Հնչյունի նշանը կոչվում է գիր կամ տառ.
օրինակ՝ ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի
Հնչյունը արտասանվում է և լսվում, իսկ
տառը գրվում է և կարդացվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 28: Հաշվեցե՛ք ամեն մի բառի տառերը. արտասանեցե՛ք հնչյունները:

Ծ Ա Ղ Ի Կ Ն Ե Ր Ը

4. Թումանյան

— Ո՛ւր գնացին ծաղիկները,
— Ս՛ուս, քնած են հողի տակ,
Տաք ծածկված ողջ ձմեռը
Ձյուն-ծածկոցով սալտակ:



Կգա գարնան արևն էլ ետ
Իր շողերով կենդանի,
Ձմռան սաստիկ ցրտերի հետ
Ձյուն-ծածկոցը կտանի:

«Ելե՛ք, — կասի, — իմ մանուկներ»:
Ու հենց նրանք իմանան,
Դուրս կհանեն գլխիկները,
Աչիկները կբանան:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 29: Գրավոր շարադրեցե՛ք: Քանի նախագասությունից, բառից և տառից է կազմված ձեր շարադրությունը:

Ո՛ւր գնացին ծաղիկները:
Ե՛րբ կգան նորից:

Հնչյունները լինում են ձայնավոր և բազմայն:

Ձայնավոր հնչյուններն են՝ ա, է, ը, ի, օ, ու, — ընդամենը 6:

Այս 6 ձայնավորները գրվում են 8 տառով՝ ա, է, ե, ը, ի, օ, ու, ու:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 30: Հաշվեցե՛ք, թե ամեն մի բառ քանի՞ ձայնավոր ունի:

Անգիր սովորեցե՛ք ձայնավորները:



Գարուն էր: Օրը տաք էր, արևը վառ:
Մեղուները փեթակից դուրս թռան:
Մեղուները դաշտում ու այգում բացված ծաղիկների բաժակներից կուշտ կերան, ապա ուրախ ուրախ վերադարձան փեթակը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 31: Անգիր սովորեցե՛ք ոտանավորը. գտե՛ք՝ ամեն մի բառ քանի՞ ձայնավոր հնչյուն ունի:

Վ Վարդանյան


Մե՛ծ Հոկտեմբեր,
 Բարով եկար.
 Խոնչ ես բերել
 Ի ու մեզ համար:
 Կարոտ է ինք
 Մենք քո գալուն,
 Ի ու մեր կյանքի
 Գայժառ գարուն:

— Բերել եմ ձեզ
 Երջանիկ կյանք,
 Ուսում, հանգիստ
 Եվ աշխատանք,
 Կինո, թատրոն,
 Երգ ու հանդես,
 Գրքեր, դպրոց,
 Մանկապարտեզ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 32: Գտե՛ք ձայնավորները, արտա-
 գրեցե՛ք և ընդգծեցե՛ք:

ՄԱՐՑ ԱՄԻՍԸ

Մին հագնում է սպիտակ,
 Մին կանաչին է տալիս.
 Մի օր ցուրտ է, մի օր տաք,
 Մին խնդում է, մին լալիս...



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 33: Գրավոր նկարագրեցե՛ք.
 Մարտ ամիսը:

Օ ձայնավորը բառասկզբին գրվում է օ տա-
 ուով, բացի ոյ և ովքեր բառերից. օրինակ՝ օր,
 օգ: Օ ձայնավորը բառամիջում և վերջում
 գրվում է ո տառով. օրինակ՝ խոտ, ձոր, Կարո:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 34: Անգիր սովորեցե՛ք ոտանավորը:
 Հաշվեցե՛ք՝ ամեն մի բառ քանի՞ ձայնավոր հնչյուն
 ունի. ճի բառերում կան օ և ո տառերը:



Կուպե՛ն լինե՛լ օդաչու,
 Մե՛սերի մե՛զ պանամա՛:
 Առա՛խարական աշխարհի
 Մե՛զախ հերոսը դառնամ:
 Վե՛ձ Արա՛խինն ինչ րե՛սանի
 Ու Եսկապու համբուրի,
 Մաի «Կեպե՛ն դու, հերոս
 Առա՛խարական աշխարհի»:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 35: Անդիր սովորեցեք ոտանավորը:
 Գտեք այն բառերը, որոնք ունեն օ և ո գրերը:
 Խոնչ հնչյունի են դրանք համապատասխանում և բառի
 մը տեղում:

ՏԱՐՎԱ ԱՄԻՍՆԵՐԸ

Ղ. Աղայան

Մարտը տալիս է ձնծաղիկ,
 Ապրիլ՝ կապույտ մանուշակ,
 Մայիսին բացվում է վարդը,
 Սոխակը երգում անուշակ:

Հունիսը մեզ խոտ է տալիս,
 Իսկ հուլիսը՝ առատ ցորեն,
 Օգոստոսը՝ տանձ ու խնձոր
 Եվ ուրիշ շատ հասուն մրգեր:

Սեպտեմբերը մեզ տալիս է
 Խաղողի բոլոր տեսակը,
 Հոկտեմբերը՝ կարմիր գինին:
 Նոյեմբերը՝ բոզկն ու տակը:

Դեկտեմբերին ձյուն է գալիս,
 Հունվարին ծածկում սար ու ձոր,
 Փետրվարին սկսվում է
 Փոփոխակի ցուրտ ու տաք օր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 36: Գրավոր պատասխանեցեք հարցերին:

Որո՞նք են գարնան ամիսները և ի՞նչ են տալիս:
 Որո՞նք են ամռան ամիսները և ի՞նչ են տալիս:

Որմնք են աշնան ամիսները և ի՞նչ են տալիս:
 Որմնք են ձմռան ամիսները: Ի՞նչ է լինում
 ձմռան ամիսներին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 37: Արտագրեցե՛ք օ տառով սկսվող
 և տեյալ բառերը և շարունակեցե՛ք:

օգնություն	օձիք	օրապահ
օգտավետ	օղի	օրեցօր
օգտվել	օճառ	օրենք
օղանավ	օպերա	օրինակ
օղանցք	օջախ	օրորել
օթևան	օտար	օրագիր
օթյակ		

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 38: Օ տառով սկսվող բառերով
 նախադասություններ կազմեցե՛ք և գրեցե՛ք:

Բառասկզբին ո գերը երկու հնչյունների
 նշան է: ո գերը բառասկզբին կարդացվում է
վո:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 39: Կարդացե՛ք և արտագրեցե՛ք
 և տեյալ բառերը, որոնք սկսվում են ո գրով:

ոգևորվել	ոսկեզօծ
ողնի	ոսկոր
ոլոր	ոստ
ոխ	օրակ
օհմակ	օրդի

ողբ	որևէ
ողնաշար	որոշ
ողջույն	օրպես
ոչ	օրսկան
ոռնոց	օրքան

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 40: Շարունակեցե՛ք ո գրով սկսվող
 բառերի ցանկը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 41: Ո տառով սկսվող բառերով նա-
 խադասություններ կազմեցե՛ք:

Ի ձայնավորը բառասկզբին և առանձին
 գրվում է է տառով, բացի եմ, ես, ենք, եք,
 են բառերից: օրինակ՝ էլի, էգուց: Ի ձայնավո-
 րը բառամիջում և վերջում գրվում է ե տա-
 ռով: օրինակ՝ բերան, տներ, փայտե:


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 42: Գտե՛ք՝ որտեղ և ի՞նչ տառով է
 գրվում է ձայնավորը:

Դեղնած դաշտերին	Պաղ-պաղ մեզի հետ
Իջել է աշուն,	Փչում է քամին,
Անտառը կրկին	Քշում է տանում
Նեթկել է նախշուն:	Տերևը դեղին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 43: Կարդացե՛ք և արտագրեցե՛ք այն
 բառերը, որոնք ունեն է, ո և օ տառերը:

ՈՉՆԻՆ ՈՒ ՕՉԸ

Ամառվա մի տաք օր էր: Արևի շողերը ալ-
բուսմ, խորովում էին արան ու արտաք: Իրսում
ամեն ինչ լուռ էր: Գյուղի առջևից հոսող վտակի



վշտոցն էլ չէր լսվում. նա էլ էր պապանձվել: Օրվա
այդ շոգ պահին գյուղի բոլոր երեխաները հաժաք-
վել էին ձորի գլխին ու նայում էին ցած: Ներքե-
վում, ձորի մեջ կոպում էին ողնին ու օձը: Ողնին
բռնել էր օձի պոչն ու կծկվել, փշերը ցցել: Օձն
ինչքան աշխատում էր, չէր կարողանում ազատ-
վել: Նա փշաքնում էր ցավից և մարմինը դես ու
դեն էր նետում: Ողնու փշերն ամուր ու սուր էին
և անխնա քրքրում էին օձի մարմինն ու գլուխը:
Բավական ժամանակ անցավ, մինչև օձը բոլորո-
վին անշարժացավ: Արդեն սատկել էր: Ողնին բաց
թողեց օձի պոչը, զգուշությամբ հանեց գլուխը,

դիտեց շուրջը, նայեց օձին, ապա զնաց ու թաք-
նըվեց մտաակա թփերի մեջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 44: Պատմեցե՛ք՝ ինչպես էին կրո-
վում օձն ու ողնին: Ո՞վ հաղթեց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 44 ա: Կազմեցե՛ք է գրով սկսվող
բառերի ցանկ՝ էգ, էակ...

Բառասկզբին ե գիրը երկու հնչյունի նշան
է: Ե գիրը բառասկզբին արտասանվում է յե:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 45: Կարգացե՛ք և արտագրեցե՛ք ե
գրով սկսվող բառերը:

եզերք	երբեմն	երեք
եզր	երբեք	երթ
ելևէջ	երգիչ	երկինք
եթե	երգչուհի	երկրորդ
ելք	երգվել	երջանիկ
եղնիկ	երեխա	եփել
եղջյուր	երեկո	եղիա
եղունգ	երեսուն	

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 46: Շարունակեցե՛ք ե ստույ
սկսվող բառերի ցանկը:


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 47: Կարդացե՛ք, արտագրեցե՛ք է, է
 և ո սառերով սկսվող բառերը:

ՏԵՐԵՎԱԹՍՓ

2. Թումանյան

— Ա՛յ փոքրիկներ, այ սիրուններ,—
 Ասաց քամին տերևներին.
 — Աշուն եկավ, մոտ է ձմեռ,
 Ի՛նչ եք դողում ծառի ծայրին:
 Ոսկի դեղին, վառ ծիրանի
 Գույներ հազեք խայտաբղետ
 Ու ճյուղերից ձեր մայրենի
 Եկե՛ք ինձ հետ, փախե՛ք ինձ հետ...
 Եկե՛ք՝ տանեմ հեշտ ու անթև,
 Անհետ ճամփով, անհայտ տեղեր,
 Չեք իմանա այսուհետև՝
 Ի՛լ ի՛նչ է գող, ի՛նչ է ձմեռ...
 Տերևները հենց լսեցին,
 Նախշուն, նախշուն գույներ հազան,
 Սվավալով տխուր երգեր՝
 Քամու թևին թռան, փախան:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 48: Անգիր սովորեցե՛ք ոտանավորը.
 արտագրեցե՛ք բառակզրին է և ո, է և օ գրերն ունեցող
 բառերը:
 Ի՛նչպես են նրանք արտասանվում:



ԻՐԻԿՈՒՆ

2. Թումանյան

Արևը շատ էր հողմել, ման էր եկել ամբողջ օրը.
 «Հերիք է,—ասաց,—
 Գնամ պառկեմ ու քնեմ»:
 Տերևը ուրախ սվավում էր, որ կանգ առավ.
 «Այս ի՛նչ է,—ասաց,—
 Արևն էլ չի երևում,
 Ես էլ պառկեմ ու քնեմ»:
 Թռչնակը երգում էր ծառի վրա, հանկարծ լսեց.
 «Այս ի՛նչ է,—ասաց,—
 Ո՛չ տերև է սվավում,
 Ո՛չ արևն է երևում,
 Ես էլ գնամ ու քնեմ»:
 Նապաստակը ուտոտում էր թփերի տակ, որ
 ահանջը սրեց.

«Այս ի՞նչ է, — ասաց, —
 Ո՛չ թռչնակն է ծլվլում,
 Ո՛չ տերև է սվսվում,
 Ո՛չ արևն է երևում,
 Ես էլ գնամ ու քնեմ»:
 Որսկանը անտառում որս էր որոնում, կանգնեց՝
 «Այս ի՞նչ է, — ասաց, —
 Ո՛չ նապաստակ է վազ տալիս,
 Ո՛չ թռչնակ է ծլվլում,
 Ո՛չ տերև է սվսվում,
 Ո՛չ արևն է երևում,
 Ես էլ գնամ ու քնեմ»:
 Լուսինը ծագեց, ցած նայեց, տեսավ.
 «Ի՞նչ լավ է, — ասավ, —
 Ո՛չ որսորդ է ման գալիս,
 Ո՛չ նապաստակ վազ տալիս,
 Ո՛չ թռչնակ է ծլվլում,
 Ո՛չ արևն է երևում,
 Մենակ ես եմ, որ անքուն
 Քեֆ եմ անում երկնքում»:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 49: Առանձին գրեցեք՝ ի՞նչ ասաց արևը: Ի՞նչ ասաց լուսինը:

Չայնավորներինց բացի, մյուս բոլոր հրնշյունները բաղաձայն են:

Բաղաձայն հնչյունները՝ բ, գ, դ, դ, թ, ժ,
լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ռ,
ս, վ, տ, ր, ց, փ, ք, ֆ, ընդամենը 30:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 50: Ամեն մի բաղաձայնով սկսվող մի բառ գրեցե՛ք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 51: Արտագրեցե՛ք: Հաշվեցե՛ք, թե ամեն մի բառ քանի՞ բաղաձայն հնչյուն ունի:

Խնկո-Ապեր

խոնարհ ու եկեղ
 մի հոգնամ էլ,
 նորոք ուսին,
 ճամեք պոպին
 մի իրիկուն
 փայլա էր րուն:



Մին էլ ճամփին
 Մի ուրիշ ճանճ
 Այն նստածին
 Ասաց. — Տո մանչ,
 Այդ եզան հետ
 Որտեղի՞ց էլ:
 Քիթը տնկած
 Ճանճը ասաց.
 — Մենք որտեղի՞ց...
 Վարում էինք,
 Վարատեղից:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 52: Գրավոր պատասխանեցե՛ք հարցերին:

Ո՛վ էր վերադառնում տունս
Որտեղ էր նստած ճանճը
Ո՛վ էր աշխատել
Ո՛վ էր հպարտանում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 53. Կարդացե՛ք: Գտե՛ք հանելուկ-
ները:
Որոշեցե՛ք՝ քանի՞ տառ և քանի՞ հնչյուն ունի ամեն
մի բառը.

Չորս եղբայր են,	Բերան չունի, փչում է
Սմեն տարի	Ու երբեմն էլ հաչում է.
Երկրի վրա	Ո՛չ տուն ունի, ո՛չ էլ տեղ:
Ման են գալիս.	Նա լինում է ամեն տեղ:

Տառերը լինում են մեծատառ և փոքրատառ:
Մեծատառը լինում է միայն բառասկզբին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 54. Արտադրեցե՛ք ստանալորը և
ընդգծեցե՛ք մեծատառերը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

2. Հայրապետյան

Այսօր նորից ենք տոնում
Քո մեծ տոնը, Հոկտեմբեր.
Ի ու տվել ես բուրբին
Երջանիկ կյանք, լավ օրեր:

Մեր երկիրը լայնարձակ,
Ծաղկափթիթ մի պարտեզ,
Ուր պայծառ է կյանքը նոր
Վառ արևի լույսի պես:

Այսօր զվարթ քո տոնին,
Սուած կարմիր զրոշներ,
Մենք գոչում ենք միաձայն՝
Կեցցե՛ք Կարմիր Հոկտեմբեր:

Տառերի ընդունված շարքը կոչվում է
այբուբեն:


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 55. Արտադրեցե՛ք մեծատառերը.

Այբուբեն

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի,
Լ, Խ, Ծ, Կ, Զ, Դ, Ծ, Մ, Բ,
Ն, Շ, Ո, Զ, Պ, Զ, Ռ, Ս, Վ,
Տ, Ր, Տ, Ռ, Փ, Գ, Բ, և, Օ, Ծ:

գիրը:

Ա ա, Բ բ, Գ գ, Դ դ, Ե ե, Զ զ,
 Է է, Ը ը, Թ թ, Ժ ժ, Ի ի, Լ լ, Խ խ,
 Ծ ծ, Կ կ, Խ խ, Զ զ, Դ դ, Ե ե, Վ Վ,
 Զ զ, Ա ա, Գ գ, Ո ո, Զ զ, Մ մ, Զ զ,
 Ո ո, Ա ա, Վ Վ, Մ մ, Ն ն, Կ կ, Ո ո,
 Վ Վ, Բ բ, Լ լ, Օ օ, Ֆ ֆ:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 56: Արտագրեցե՛ք փոքրատառերը
 ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 57: Անդիր սովորեցե՛ք այբբենը
 ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 58: Արտագրեցե՛ք այբբենական
 կարգով:

գ, թ, ի, ժ, դ, զ, ե, բ, ը, ա, խ, լ, է, օ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 59: Արտագրեցե՛ք բառերը իրենց
 առաջին տառերի այբբենական կարգով:

Արամ, ծագիկ, թռչուն, բղբղ, գարուն, դանակ, ըն-
 կեր, դանդ, ինչ, էմին, լոր, խաղող, օր, երգ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 60: Անեն մի մեծատառով սկսվող
 մի անուն կամ ազգանուն գրեցե՛ք:

3 Կնչյուն ունեցող յեվ բառը կարճ գր-
 վում է և:
 Այս և գիրը մեծատառ չունի, զրա փո-
 խարեն գրվում է եվ:

մ եղու
 Թոսմարից ես շրջում եմ
 եմ դաշր, և՛ ասր, և՛ այգի,
 ես մի փոփրիկ միս անդամ և եմ
 մ եր համ երաշխ համայնգի:

Բառի մեջ եվ լավելիս՝ գրվում է և:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 62: Կարգացե՛ք և արտագրեցե՛ք այն
 բառերը, որոնք սկսվում են և, օ, ո, է գրերով: Ար-
 տագրեցե՛ք և գիրն ունեցող բառերը:

Քամին ասաց.


— Աշխարհում կան տաք երկրներ, որտեղ ձյուն չի գալիս: Այնտեղ մարդիկ այրվում են արևից: Կան նաև ցուրտ երկրներ, որտեղ ամբողջ տարին ձյուն է: Ես տաք երկրներ եմ գնում, այնտեղից տաք օդ ուղարկում ցուրտ երկրներին, որ մարդիկ տաքանան և չսառչեն: Հետո թռչում եմ ցուրտ երկրներ, այնտեղից էլ ցուրտ օդ եմ ուղարկում տաք երկրները, որպեսզի մարդիկ մի քիչ հովանան և տաթից չխեղդվեն:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ 63: Արտադրեցեք և ընդգծեցեք և գիրը: Քանի՞ հնչյունի նշան է.

արև, տերև, բարև, նաև, եղևնի, անձրև, սև, ձև, կեդև, Սևան, Երևան, բեռև և Լևոն:

Երկու բաղաձայնների միջև լսվող ը ձայնավորը սովորաբար չի գրվում:
Օրինակ՝ լսվում է գըլուխ, բայց գրվում է գլուխ:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ 64: Արտադրեցեք և ընդգծեցե՛ք այն բառերը, որտեղ լսվում է ը, բայց չի գրվում:



ժանուշակ զանգակ ջուշան մարգարիտ

Վանդակիկը կասցայր ցխով:
Քաւ է կայեց թիւերի փակ,
Զանգակիկը մեղծ եռեղով
Քերն է ներկեց կասցայր-սպիտակ
Երանակ հագամ հեղ յուզանք
Փափառամ է ցեխյուտի հեղ,
Քերր փռամ մարգարիտ
Օրորվում է արտազ ու եղ:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ 65: Գրեցե՛ք ութ ծաղկի անուն:


Ե. ՏՈՂԱԴԱՐՁ

Բազմավանկ բառերը կարելի է բաժանել վանկերի:
Օրինակ՝ ա-շա-կերտ, Սա-նա-սար:
Վանկերի բաժանելիս՝ բաղաձայնների միջև լսվող ը ձայնավորը գրվում է:
Օրինակ՝ գը-լու-խ, փըս-փը-սալ:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ 66: Արտադրեցե՛ք՝ վանկերի բաժանելով, որտեղ լսվում է ը, գրեցե՛ք:

ԿԱՄԱԿՈՐ ԱՅԾԵՐԸ


Նրկու կամակոր այծեր իրար հանդիպեցին մի ձեղ կամրջի վրա: Այծերից ոչ մեկը չուզեց մյուսին



սին ճանապարհ տար: Նրանք ճակատ ճակատի զարկեցին, իրար գլուխ պատռեցին և վերջը երկուսով էլ թրմփացին ջուրը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 67. Գրավոր պատասխանեցեք հարցերին.

- Որտե՞ղ հանդիպեցին կամակոր այծերը:
- Ինչո՞ւ կռվեցին:
- Ո՞վ պատժվեց և ինչպե՞ս:



Երբ ամբողջ բառը տողում չի տեղավորվում, մեկ կամ մի քանի վանկ տանում ենք հաջորդ տողը: Դա կոչվում է տողադարձ:
Օրինակ՝ Ար-տաշես, Արտա-շես:


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 68: Տո՛ւյց տվեք, թե քանի՞ տեսակ կարելի է տողադարձ անել հետևյալ բառերը.

Արեւաւեր, Եանապարհ, անպատներ, արթնամայ, ամենամուր, արջակեցե՛ք, դեղապտուկ, Կարկազանու:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 69: Անգիր սովորեցե՛ք, արտագրեցե՛ք՝ վանկերի բաժանելով. չմոռանաք ը գրել, երբ վանկի մեջ լավում է:



Դ՛մ դասագիրքը
 Կ' Գրիգորյան
 Երբ դպրոց փարամ
 Դեռ իմ մայրիկը,
 Աիրում շեղա առա
 Դ՛մ դասագիրքը:
 Գուցենքով պես-պես
 Գալստեղով լիքը,
 Աիրուցի աչնպես
 Դ՛մ դասագիրքը:



Գնում ենք դպրոց
 Ծա ու Լեռնիկը,
 Կարգում ենք ուրախ
 Իմ դասագիրքը:

Ահա մեր ազատ,
 Մեծ հայրենիքը,
 Որ ցույց է տալիս
 Իմ դասագիրքը:

Ահա Կրեմլը
 Մտալինն ինքը,
 Որ տվել է մեզ
 Իմ դասագիրքը:

Տողազարձ անելիս՝ և զերը զրվում է ե-վ-
 օրինակ՝ արևի— արե-վի, տերևի— տերե-վի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 70: Անգիր սովորեցե՛ք:

Արտազրեցե՛ք և յուրաքանչյուր բառ բաժանեցե՛ք
տողադարձի նման՝ ձեր ցանկացածի պես՝ չմոռանաք
լավող ընդ գրեր:

ՁՆՄԱՂԻԿ

1. Հայրապետյան



Ամբողջ ձմեռ
Վերմակ առել,
Քուռն էր մտել մի ծաղիկի
Ձյունի ծոցում
Նա չէր մբսում,
Քուռնն էր հանգիստ, անուշիկ
Երբ արևը
Իր բարևը
Տվեց սառած աշխարհին,
«Ելեք, ելեք,
Սիրուն բալեք»,
Չայն տվեց նա բուրբին՝
Ձյունը ճեղքեց,
Ելավ, կանգնեց
Ամենից շուտ մի ծաղիկ:
Մարդիկ տեսան,
Ուրախացան,
Անվանեցին ձնծաղիկ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 71: Գրավոր նկարազրեցե՛ք գար-
նան գալը:

Ի՞նչ է անում արևը:
Ի՞նչ է լինում օդը:

Ինչպես է լինում օդը:
Ի՞նչ է լինում ձյունը:
Ինչով է ծածկվում դաշտը:
Ի՞նչ են անում թռչունները, կենդանիները
և մարդիկ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 72: Կարդացե՛ք և պատմեցե՛ք: Ար-
տազրեցե՛ք այն բառերը, որոնց մեջ լավում է ը, բայց
ձե՛ք գրված, բաժանեցե՛ք զբանք վանկերի:

Ո՞Վ Ի ՈՒԺԵՂ

— Ես եմ անտառի տերը, ես
եմ ամենից ուժեղը, — պարծե-
ցավ բրդոտ արջը անտառի գա-
ղանների մոտ:

— Ո՛չ, մարդն է, — ճչաց աղ-
վեսը:


— Ինչպես ես համարձակվում
այդպես խոսել, աղվես, ես մար-
դուն թաթիս մի հարվածով
ջարդ ու փշուր կանեմ, — ասաց
արջը:

— Իսկ ես նրան պատառ-պա-
տառ կանեմ, — վրա բերեց գայ-
լը:

— Կտեսները, — փնթփնթաց
աղվեսը:

— Ես կթռչեմ բարձր, շատ
բարձր, ամպերին կհասնեմ, —
ասաց թռչունը, — մարդը թե չունի, որ ինձ հասնի:

— Ես էլ կլողամ, ջրի խոր տեղը կեջնեմ, —



ասաց ձուկը, — մարդ չի կարող ջրի մեջ ապրել,
նա ինձ չի հասնի:

— Ես հողի մեջ հանգիստ կպառկեմ, — ասաց
որդը, — մարդը ինձ չի տեսնի և ոչինչ չի կարող
անել:

Մարդը գուրս եկավ հրացանն ուսին, մի ձեռ-
քում թակարդ, մյուսում ուռկան. ինչ արավ
մարդը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 73: Գրավոր պատասխանեցեք.

Ո՛վ է ամենից բարձր ու արագ թռչում և ինչձօ՞ք
Ո՛վ է ամենից հեռուն խփում և ինչձօ՞ք: Ո՛վ է ամենից
լավ լողում և ինչձօ՞ք: Ո՛վ է ամենից հեռուն տեսնում և
ինչձօ՞ք: Ո՛վ է ամենից հեռուն խոսում և ինչձօ՞ք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 74: Արտազրեցե՛ք և բազմավանկ
բառերը բաժանեցե՛ք սողադարձի նման.

Երկու խափ
մի իննույն երկաթի կրողից դարձ
նույնում շինված էին երկու խափ:
Նրանցից մեկն իսկույն գնաց
աշխատանքի, իսկ մյուսը եր-
կուր ժամանակ ընկած էր դարձ
նույնում:

մի անգամ այդ երկու խա-
փերը կրկին պատասխանեցին ի-
րար: Աշխատող խափը ար-
ձագի արես փայլում էր, իսկ
պարսպ մնացածը սևացած
էր ու ժանգոյ պատած:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 75: Անգիր սովորեցե՛ք ոտանավորը:
Արտազրեցե՛ք բառակղբին ե, է, օ և ու գրեր ունե-
ցող բառերը:

Արտազրեցե՛ք և գիր ունեցող բառը:

Արտազրեցե՛ք նաև այն բառերը, որոնց մեջ լսվում
է ը, բայց չի գրված:

Վանկերի բաժանեցե՛ք չորս սողի բազմավանկ բա-
ռերը:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Վ. Վարդանյան

Դու ծաղկում ես օրեցօր,
Սովետական Հայաստան,
Հաղթանակներ նորանոր
Չարգարում են քո ճամփան:
Հոկտեմբերը բերեց քեզ
Ազատություն, խնդություն,
Երջանիկ կյանք տվեց մեզ,
Տվեց ուսում, գիտություն:

Աշխարհի չորս կողմերից
Որդիներդ տուն եկան,
Աղաավեցին վշտերից,
Ուրախ կյանքի գիրկն ընկան:

Ձանգուն արագ հոսում է
Սևան լճից թափ առած,
Արագածը ժպտում է
Իր բարձունքից՝ հիացած:

Վառ աստղերը կրեմլի
Լույս են տալիս խնդու թյան,
Դու միշտ ծաղկիր, սիրելի,
Մեր հարազատ Հայաստան:

6. ՄԵԾԱՏԱՌ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 76: Արտագրեցեք:

*Կարբիկ, Կնուր, Կղիկ, Կարբեն,
Կրմիկն, Կրղակն, Կնուրն ուր են:*

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 77: Քանի անուն կասես՝

- գետի. Վոլգա
- սարի. Արագած
- գյուղի. Քանաքեռ
- քաղաքի. Երևան
- տղայի. Արամ
- աղջկա. Հասմիկ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 78: Գրեցե՛ք հինգական անուն գե-
տի, սարի, գյուղի, քաղաքի, տղայի, աղջկա:

Գրելիս մարդկանց, գետերի, լճերի, լեռ-
ների, գյուղերի, քաղաքների, փողոցների, եր-
կրրների անունները սկսում են մեծատառով:
Աղգանուններն ու հայրանունները նույն-
պես սկսվում են մեծատառով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 79: Գրեցե՛ք երեք տղայի անուն,
չորս աղջկա անուն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 80: Կազմեցե՛ք հինգ անուն և աղ-
գանունների ցուցակ:

1. Հրաչյա Հովսեփյան
2.
3.
4.
5.

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 81: Կազմեցե՛ք ձեր ընկերների
անվանացուցակը այբբենական կարգով. օրինակ՝ Աբրա-
համյան Արա Կարապետի:

Գրելը սկսում ենք մեծատառով:
Վերջակետից հետո էլ սկսում ենք մեծա-
տառով:
Ոտանավորների ամեն մի տողի առաջին
բառն էլ սկսում ենք մեծատառով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 82: Բացատրեցե՛ք՝ ո՞ր բառերն են սկսվում մեծատառով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 83: Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք մեծատառով սկսվող բառերը. բացատրեցե՛ք:

Արմենակ Հովհաննիսյանը գերազանցիկ աշակերտ է: Վոլգան և Դոնը ուսական մեծ գետեր են: Մասիսն ու Արագածը լեռներ են: Երևանն ու Լենինականը Սովետական Հայաստանի մեծ քաղաքներն են: Երևանի գեղեցիկ փողոցներն են՝ Ստալինի պողոտան, Լենինի պողոտան, Աբովյանի փողոցը:

ԱՌԱՋՆՈՐԴԻ ՆԿԱՐԸ

Նայիր, որդիս, այս նկարին,
Տես, ինչ ուրախ է ժպտում.
Նա լույս բերեց մեր աշխարհին,
Բերեց զարնան խնդություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 84: Գրեցե՛ք գյուղի, քաղաքի, փողոցի, գետի, լճի, սարի անուններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 85: Գրեցե՛ք ձեր հասցեն հետևյալ օրինակով:

Արտաշատի շրջան

Անաստասյան գյուղ

Արտաշես Մարգարյանի

կամ

Երեվան


Նալբանդյանի փողոց № 45,

բնակարան 5

Հասնիկ Գեվորգյանի

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 86: Գրեցե՛ք ձեր ծանոթի, ընկերոջ, ըրոջ, եղբոր, ազգականի հասցեները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 87: Բացատրեցե՛ք՝ որ բառերն են սխալում մեծատառով և ինչո՞ւ:



Հ Ե Ք Ի Ա Թ

Վ. Աղայան

Ձմեռ էր, գիշերը երկար:

Գյուլնազ տատը, գլուխը բարձի վրա դրած, ննջում էր: Երեխաները վրա թափվեցին, բունը փախցրին, որ իրենց համար մի հեքիաթ ասի:

Նա էլ սկսեց.

— Եղել է, չի եղել՝ մի արտուտիկ:

Կառուցը սուր՝ մեր Սուրբիկի քթի նման:

Բմբուլը խուճուճ՝ Արփիկի մագերի նման:

Թևերը փափլիկ՝ Արմիկի կոնների նման:

Ահա այդպես սիրուն էր արտուտիկը:

— Բա ինձ նման ոչինչ չունե՞ր, — ասաց Վանին:

— Բա ի՞նձ, — ձայն տվեց Հռիփսիկը:

— Ինձ էլ չասացիր, տաախիկ, — լաց եղավ Նազիկը:

— Սպասեցե՛ք, սպասեցե՛ք, երեխաներ, դեռ չեմ վերջացրել, ամենքիդ էլ բաժին կհասնի, — ասաց տատը և շարունակեց: — Աչիկներն այնպես նախշուն էին, ինչպես Վանիկի աչքերը, կատարն այնպես կարմիր էր, ինչպես Հռիփսիկի թշերը, ոտներն այնպես բարակ էին, ինչպես Նազիկի մատները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 88: Պատմեցե՛ք՝ ում էր նման արտուտիկը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 89: Լրացրե՛ք այս անկետան.

1. Անուն
2. Հայրանուն
3. Ազգանուն
4. Բնակության տեղը (գյուղ կամ քաղաք)
5. Փողոց և №

7. ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 90. Արտագրեցե՛ք և գտե՛ք ընդգրծված բառերի ընդհանուր մասը:

I

Դաստատուն մտավ գասարան: Դասաժամն սկսվեց: Բոլորս հանեցինք մեր գասական պիտույքները: Դասընկերս սկսեց կարգալ գասագիրքը:

II

Գործարանն արտագրեց նոր գործիքներ: Բոլոր մեքենաները գործում են: Սուրենը գործնական տղա է:

Կապիտալիստական երկրներում գործազուրկներ շատ կան: Դասը սովորիր, անգործ մի՛ մնա: Այդեգործական բրիգադան ժամկետից շուտ ավարտեց իր գործը:

Բառի հիմնական իմաստը ցույց տվող մասը կոչվում է արմատ. օրինակ՝ աշակերտական բառի արմատն է աշակերտ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 91: Արտագրեցե՛ք և բառերի արմատն ընգծեցե՛ք.

Գետակ, նավակ, ձորակ, միակ, թերուս, ուսում, բանվոր, բանող, բանել, անբան, վախենալ, վախկոտ, անվախ, ձայնավոր, ձայնական, անձայն:

Օրինակ՝ գետակ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 92: Գրեցե՛ք նախորդ վարժության բառերի արմատները. օրինակ՝ գետ...

Նոր բառ կազմելու համար արմատի վրա ավելացվում է մասնիկ. օրինակ՝ ավոր մասնիկն ավելացվում է ձայն բառի վրա և կազմվում է ձայնավոր բառը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 93: Կազմեցե՛ք բառեր, որոնք ունենան հետևյալ արմատները. ձայն, փոքր, տետր, աշակերտ, գետ, ծով, բան, նուշ, մայր, հայր (մասնիկներ՝ ավոր, ալ, ուհի, վոր, իկ):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 94: Արտագրեցե՛ք նույն վարժու-

թյան բառերը և ընդգծեցե՛ք արմատի վրա դրվող մասնիկները.

օրինակ՝ գետակ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 95: Արտագրեցե՛ք հետևյալ բառերը և ընդգծեցե՛ք մասնիկները.


Աշակերտուհի, ընկերուհի, տնակ, նավակ, փոքրիկ, ուլիկ, հավիկ, ճուտիկ, հորթուկ, արջուկ, անվախ, անպայաման:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 96: Գտե՛ք այն բառերը, որոնք նույն արմատն ունեն.

Անվերջ, տեսնել, տեսարան, բանել, վերջին, լանվոր, տեսողություն, բանող, վերջանալ:


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 97: Նախորդ վարժության բառերն արտագրեցե՛ք և գծիկով անջատեցե՛ք արմատը մասնիկներից. օրինակ՝ ան-վերջ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 98: Նախորդ վարժության բառերից կազմեցե՛ք գծագիր հետևյալ օրինակով.




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 99: Կազմեցե՛ք բառեր, որոնք ունենան հետևյալ մասնիկները վերջից. իկ, ակ, ուհի, եղեն, ական, ային, ավոր, ություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 100: Նախորդ վարժության մասնիկներով կազմած բառերից կազմեցե՛ք գծագրեր հետևյալ օրինակով.



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 101: Կազմեցե՛ք բառեր, որոնք սկզբից ունենան հետևյալ մասնիկները. ան, դժ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 102: Նախորդ վարժության մասնիկներով կազմած բառերից կազմեցե՛ք նաև զծագիր հետևյալ օրինակով.



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 103: Արտագրեցե՛ք միմյանց ետևից այն բառերը, որոնք նույն մասնիկներն ունեն.

Տիզրանուհի, փոքրիկ, նավակ, Սմբատուհի, Սաթիկ, տաշտակ, Հայկուհի, Լուսիկ, անասան, աշակերտուհի, թոչնիկ, անվեհեր, բանվորուհի, անաման, տնակ, դերասանուհի, մանկիկ, բոլորակ, աննահանջ, միակ, քույրիկ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 104: Կարգացե՛ք. գտե՛ք ընդգծված բառերի արմատները.

Ա Ն Ա Հ Ի Տ Ը

Նրա անունն է Անահիտ,
 Կարմրաթշիկ ու փոքրաքիթ,
 Ունի երկար հյուսված մազեր,
Կոկիլիկ է շատ ու մաքրասեր:
 Ուսուցչուհին գրա համար
 Նրան ընտրել է սանիտար:

Ճերմակ տուրակին ուսից կախած,
Թևի վրա մի կարմիր խաչ,
 Նա լուրջ մտնում է դասարան,
Ուշիմ նայում սրան-նրան,
Որ չլինի՛ ընկերուհին
 Թանաք թափի իր զրքերին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 105: Արտագրեցե՛ք այն բառերը, որոնք ունեն իկ և ուհի մասնիկներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 106: Կազմեցե՛ք հինգական բառիկ, ուհի, ություն, ախ, ան, զժ մասնիկներով:

8. ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 107: Գտե՛ք՝ ինչպե՞ս կարելի է ասել ուրիշ կերպ:

- պատուհան
- անվախ
- աշխատասեր
- խոշոր
- ահուելի
- անծայր
- սոսկալի
- դուրեկան

(հաճելի, զարհուրելի, սարսափելի, անվերջ, ջանասեր, մեծ, քաջ, լուսամուտ)

Նույն իմաստն ունեցող բառերը կոչվում են նույնանիշ բառեր. օրինակ՝ խոշոր—մեծ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 108: Գրեցեք հինգ բառ և նրանց նույնանիշները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 109: Գտեք իրար հակառակ իմաստով բառեր.

- մութ
- ցածր
- մեծ
- քաղցր
- լայն
- կարճ
- տաք
- մեծացավ
- իջավ

Միմյանց հակառակ իմաստ ունեցող բառերը կոչվում են հականիշ բառեր. օրինակ՝ շանասեր—ծույլ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 110: Գրեցեք հինգ բառ և նրանց հականիշները:

9. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ը ձայնավորը

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 111: Արտագրեցեք ք զբով սկսվող բառերը և կարգացեք.

- | | | |
|-----------|-----------|-----------|
| ըմբոստ | ընդունել | ընծայել |
| ըմբռնել | ընդունվել | ընկերուհի |
| ընդհանուր | ընթանալ | ընկույթ |
| ընդհատել | ընթերցել | ընտանիք |
| | | ընտրել |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 112: Շարունակեցեք վերևի բառացանկը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 113: Որոշեցեք՝ որ հնչյուններից առաջ լավոդ ը-ն չի գրվում.

Ընկեր Ստեփանը վերագարձավ Ստեփանափանից: Ժամի իննին սկսվում է մեր զասը: Մի՛ շտապիր, սպասիր մի քիչ՝ զբոսանքի գնանք: Չգնչե եղիր արտագրելիս, ստորակետ բաց չթողնես: Ստուգման ժամանակ հինգ ստացա: Դաչտում սփռված են սքանչելի ծաղիկներ:

Բառասկզբի ը-ն չի գրվում ստ, սպ, սփ, սթ, սկ, սք, զգ, գբ, շտ երկուսից բաղաձայններից առաջ:
Բացառություն է ըստ բառը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 114: Կարգացեք բառացանկը և արտագրեցեք.

- | | | |
|---------|---------|--------------|
| սկիզբ | սպորտ | զբաղմունք |
| նպասել | ստամոքս | զգալ |
| սպառել | ստանալ | զգացմունք |
| սպառնալ | ստեղծել | շտաբ |
| սպա | ստոր | շտապ |
| սպիրտ | ստվեր | զգուշություն |
| սպունգ | ստիպել | սփոփել |
| | | սքանչանալ |

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 115: Ո՞ր բաղաձայններից առաջ լավում է ք, բայց չի գրվում: Արտագրեցեք և ընդգծեցեք:

Ակիպր, սկիբառ, սկիբեր, ընկեր,
 սքանալ, ընտրել, սքանալիս,
 ընդունակ, սքոբրագրութիւն, ըն-
 ծա, սքոբիւն, սքոբան, սքոբել,
 սպիրակ, սքանելի, սքոբել, ըն-
 ընդհանրան, սքոբիւն, ընդհանր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 116: Ո՛ր բաղաձայններից առաջ է լսվում ը, բայց չի գրվում: Արտագրեցեք և ընդգծեցեք:

Զբաղվել, գրոսներ, գտել, զգալ, զգաստ, զընդան, զգոն, զվարթ, զգեստ, զգույշ, զրույց, շապալ, շտեմարան, գրահ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 117: Արտագրեցեք և ավերացրեք բայ թողնված տառերը.

Որսորդը մի գայլ — պանեց: — պիտակ սավանթ ծածկել է գաշտ ու ձոր: — տեփանն ու — պանդարը — բոսանքի են — տապում: — գույշ, — գեստղ շպատառտես: — կսվել են մեր — տուգումները: (սպանեց, սպիտակ, Ստեփան, Սպանդար, գրոսանք, շապակել, զգույշ, զգեստ, սկսել, ստուգում):

Տողադարձի ժամանակ բառասկզբին լսվող ը-ն գրվում է. օրինակ՝ ըս-պատել, ըզ-բոսներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 118: Գտեք սոյ, սո, սկ, սթ, զգ շա բաղաձայններով սկսվող բառեր և տողադարձ արեք-օրինակ՝ ըշ-տեմարան, ըս-պիտակ:


ԵՐԿՀՆՉՅՈՒՆՆԵՐ

այ, ույ, յա,
 յու, իա, իու

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 119: Արտագրեցեք, ընդգծեցեք այն բառերը, որոնք ունեն այ, ույ, յա, յու երկհնչյունները:

ԽԱՂՈՂԻ ԱՅԿՈՒՄ

Մի ամառ, երբ զեռ փոքր էի, ես ու իմ Արուսյակ քույրը հյուր էինք գնացել կոլխոզի այգին: Ամեն ինչ այնտեղ նոր էր մեզ համար: Ամբողջ օրը թափառում էինք այգում, իսկ երեկոյան հողնած ու անուշ քնում էինք:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 120: Ի՞նչ է նկարված. պատմեցե՛ք:
 ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 121: Գտե՛ք և ավելացրե՛ք այ, ույ,
յա, յու, իա, իու երկհնչյուններ ունեցող բառեր:

մայր	---
բույս	---
Քակրս	---
Այուն	---
Իրանապ	---
միություն	---

Յ ՉԱՅՆԱԿԱՊԸ

Երբ ա և ո ձայնավորներին հաջորդում է մի այլ ձայնավոր, նրանց միջև գրվում է յ, եթե լավում է. օրինակ՝ հայելի, Համոյի:
 Այդ յ-ն կոչվում է ձայնակապ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 122: Ստուգեցե՛ք՝ ձր ձայնավորներն է կապում յ-ն.

Նայի՛ր, Կարոյի պայուսակը Միքայելի նստա-
 րանի վրա է:

Հայելին սեղանի վրա է: Նոյեմբերն աշնանա-
 յին ամիս է:

յ ձայնակապը, հաջորդ ձայնավորին միա-
 նալով, վանկ է կազմում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 123: Վանկերի բաժանեցե՛ք հետե
 վյալ բառերը.

Մայիս, Արամայիս, կայարան,
 Մարոյի հայելին, Սաքոյի պա-
 յուսակը, նոյեմբեր ամիսը:

ի, ե, ի, ու և հաջորդ ձայնավորների մի-
 ջև յ ձայնակապը չի գրվում. օրինակ՝ Մամբ-
 րեի, լիառատ, կենդուրուի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 124: Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք
իա, իե, իո, իու երկձայնավորները:

Գարրիելը և Դանիելը միասին են պարապում:
 Արամը և Վիկտորյան էքսկուրսիա գնացին: Ընկ.
 Օֆելյան մեր դաստիարակն է: Մոսկվան Սովետա-
 կան Միության մայրաքաղաքն է: Պիոներ Վա-
 չիկը գերազանցիկ է: Դաս պատասխանողը ես էի:
 Նուների քույրը Աննան է:

ԲԱՂԱԶԱՅԻՆՆԵՐ

դ-թ

Մի շարք բառերում հանդիպող զ գիրը կարդում ենք թ: Այդպիսի բառերում պետք է գրել զ և կարդալ թ. օրինակ՝ կարգալ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 125: Կարգացե՛ք և արտագրեցե՛ք հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է զ, բայց կարգացվում է թ.

առաջնորդ	վարդ	բուրդ
արդուկ	կարդալ	երգիկ
հաջորդ	մարդ	երգվել
անցորդ	Վարդան	կոկորդ
արդար	արդեն	

զարդ	հարդ	խնդրել	
ժողովուրդ	հորդ	երկրորդ	վրդովել
օդ	որդի	երրորդ	զգալ
խորհուրդ	որդ	չորրորդ	
ջարդել	օդաչու	զգում	


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 126: Նախորդ բառերը գրեցե՛ք անգիր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 127: Արտագրեցե՛ք: Կրացրե՛ք բաց թողնված տառերը:

Վար-անը երկրորդ- դասարանում է:
 Անդան կար-ում է մի նոր գիրք:
 մայրսին բացվում է վար-ը:
 Առվերական ժողովուրդ-ը երգանիկ է:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 128: Վերևի բառերը գրեցե՛ք այբ-բենական կարգով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 129: Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք այն բառերը, որոնց մեջ գրվում է զ, բայց կարգացվում է թ:




ՄԱՅԻՍ

Մայիս, մայիս,
 Նախշուն ամիս,
 Բարով եկար մեզ համար.
 Բերիր զարդեր՝
 Կարմիր վարդեր
 Եվ ծաղիկներ անհամար:

Մի շարք բառերում ձ գիրը կարդացվում է ց: Այդպիսի բառերում պետք է գրել ձ և կարդալ ց. օրինակ՝ բարձր:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 130: Արտադրեցե՛ք և սովորեցե՛ք անգիր գրել հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է ձ, կարդացվում է ց.




խուրձ

Խըրջակուրդ, բարչ, դեղչ, դեղ-
չակիկ, բարչունի, դարչ, դաղչ, մաղչ,
խամարչակ, վարչ, օրավարչ, օչ,
դարչյալ, փորչ, վերադարչ:



դերձակ



արձան

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 131: Արտադրեցե՛ք նախորդ բառե-
րը այբբենական կարգով և կարդացե՛ք:


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 132: Անգիր գրեցե՛ք նախորդ բա-
ռերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 133: Արտադրեցե՛ք և նախորդ բա-
ռացուցակի օգնութեամբ լրացրե՛ք բաց թողնված տառը.

Բար—ը պահիր պիտներական պատիվը:
Վերադար—ին տեսա մի գեղեցիկ ար—ան:
Ար—ակուրդը վերջացավ: Դեր—ակը կարում է:
Բար—ը փափուկ է: Դեղ—ը համեղ միլդ է:

Զ—չ

Մի շարք բառերում հանդիպող Ղ գիրը կարդացվում է չ: Այդպիսի բառերում պետք է գրել Ղ և կարդալ չ. օրինակ՝ միջատ:



արջ



մըջյուն

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 134: Արտագրեցե՛ք և սովորեցե՛ք անգիր գրել հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է Ն, կարդացվում է չ:

վերջ
առաջին
առողջ
ողջուն
զղջալ
միջակ

թըջել
աջ
մեջ
իջնել
առաջ
միջատ

արջառ
վերջալույս
վերջակետ
ողջ
միջանցք
առջև



աղջիկ



չղջիկ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 135: Անգիր գրեցե՛ք նախորդ բառերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 136: Գրեցե՛ք նախորդ բառերը այբբենական կարգով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 137: Արտագրեցե՛ք և նախորդ բառացուցակի օգնությամբ լրացրե՛ք բաց թողնված տառը:

Մուս-ին դասարանում աղ-իկներ
շար կան: Միջակարդի վեր-ին
գրը կրկնեցի դասերս: Մի-ի խ-
թորթ թր-եց իր ուրը: Մաշտում
մի-յունի բույն փեսս:

գ-ք

Մի շարք բառերում հանդիպող զ գերը կարդացվում է ք: Այդպիսի բառերում պետք է գրել զ և կարդալ ք. օրինակ՝ կարդապահ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 138: Արտագրեցե՛ք և սովորեցե՛ք անգիր գրել հետևյալ բառերը, որոնց մեջ կարդացվում է ք, բայց գրվում է զ:

Կարգին, երգ, օգնել, մարագ,
 անկարգ, կարգ, հոգնել, օգուտ,
 երգիչ, կարագ, հոգնակի, երագ,
 քարգմանել, մարգար, պարգև,
 միրգ, շոգի, ծագել, շոգ, անարգիս,
 եագուտ, անգամ, ֆրիգոր, չգել,
 էգուտ, երագու, նորոգել, ուրագ,
 շոգեկանք, մարգարիտ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 139: Արտագրեցեք վերևի բառերը այբբենական կարգով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 140: Անգիր գրեցեք վերևի բառերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 141: Արտագրեցեք և նախորդ բացասուցակի օգնությամբ լրացրեք բաց թողնված տառը:

Մի եր— գիտեմ ես աննման,

Հզոր մուրճի թափի նման:

Պար—ևուհին օ—նում է Մար—արիափն:

Ամառը շո— է լինում: Սար—խար հո— նել է:

Հյուսնը ուրա—ով տաշում է:

բ—փ

Մի շարք բառերում հանդիպող ք վերը կարդացվում է փ: Այդպիսի բառերում պետք է գրել ք և կարդալ փ. օրինակ՝ երք:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 142: Կարդացեք, արտագրեցեք և սովորեցեք գրել հետևյալ բառերը, որոնց մեջ գրվում է ք, բայց կարդացվում է փ:

սրբել	խաբերա	աղբ
հարբել	խաբել	ողբ
երբեք	համբույր	հարբուխ
նուրբ	համբերել	ուրբաթ
որբ	որբանոց	



գարբին

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 143: Արտագրեցեք վերևի բառերը այբբենական կարգով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 144: Անգիր գրեցեք վերևի բառերը:

դ—խ

Մի շարք բառերում զ վերը կարդացվում է խ: Այդպիսի բառերում պետք է գրել զ և կարդալ խ. օրինակ՝ աղջիկ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 145: Կարգացե՛ք, արտագրեցե՛ք և ատվորեցե՛ք անգիր գրել հետեյալ բառերը.

Ժաղկաման	դաղձ	մաղթել
աղբյուր	քաղցր	մեղք
աղքատ	դեղձ	չղջիկ
քաղցած	եղբայր	շողք
բաղկանալ	ծաղկել	ողջույն
փողկապ	հաղթել	ողջունել
զաղթել	հաղթանակ	պղտոր

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 146: Արտագրեցե՛ք այբբենական կարգով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 147: Անգիր գրեցե՛ք վերևի բառերը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 148: Կարգացե՛ք, արտագրեցե՛ք այն բառերը, որոնց մեջ գրված են շ, ք, ղ, ձ, ղ, բայց կարգացվում են չ, ք, թ, ց, խ:

ԱՌՍՁԻՆ ՎԱՐԴԸ

Գարունը բացվեց, արևը շողաց պայծառ երկրնքում: Կանաչ ծիլերը գետնի տակից դուրս հանեցին գլխիկները և ողջունեցին գարնանը: Արևիկը ուրախ ուրախ վազեց տան առջևի պարտեզը, տեսավ՝ մայրիկն ու մեծ քույրը հողը փորում են և փոսերի մեջ շիվեր են տնկում:

— Մայրիկ, ասա, իսկ ես ի՞նչ անեմ, — հարցրեց աղջիկը:

Մայրիկը, ցույց տալով վարդենիները, ասաց.

— Խնամի՛ր այս երեք վարդենի: Նրանք դեռ վշտ են ու մերկ, բայց որ արևը տաքացնի, դու էլ լավ խնամես, նրանք կկանաչեն ու կզուգվեն կարմիր վարդերով:

Այդ օրվանից Արևիկի ամենասիրած զբաղմունքը դարձավ վարդենիները խնամելը: Ամեն օր նա վաղ արթնանում էր, մտնում պարտեզ և շրոմ ու խնամում վարդենիները:

Մի առավոտ էլ Արևիկը ցնցուղը ձեռքին վազեց պարտեզ և տեսավ, որ վարդենիները կոկոններ են արձակել:

— Կոկոններ... — բացազանչեց աղջիկը և վազեց մորն ու քրոջը հայտնելու ուրախ լուրը:

Մի օր էլ նա շուտ արթնացավ, գնաց պարտեզ ու տեսավ կանաչ տերևների մեջ մի բացված կարմիր վարդ:

— Վա՛րդը... — ճչաց աղջիկը ուրախությունից, մոտեցավ թփին ու սկսեց զգուշությամբ շոյել վարդի թավշյա թերթերը:

Արևիկը դեռ վաղուց մտածել էր, որ առաջին վարդերը պիտի նվիրի իր սիրելիներին:

«Բայց ո՞ւմ նվիրել առաջին վարդը», մտածում էր նա, շարունակելով հիացած նայել ժպտացող վարդին:

Եվ հանկարծ նրա գլխում մի միտք ծագեց: Նրա աչքերը ուրախությունից փայլեցին:

Քիչ հետո նա խնամքով հագցնում էր վարդը ընկեր Ստալինի նկարի շրջանակին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 149: Գրավոր պատասխանեցե՛ք հետեյալ հարցերին.

Ո՞վ խնամեց վարդենիները:

Ի՞նչ տվեցին վարդենիները:

Ո՞ւմ էր շատ սիրում Արևիկը:

Ո՞ւմ նվիրեց Արևիկը առաջին վարդը:

10. ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 150: Ավելացրե՛ք ուրիշ առարկաների անունները.

Ի՞նչ.— մատիտ, տու՛ն, ծառ, խոտ...


Ի՞նչ.— ձի, բաղ, հավ, արջ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 151: Ավելացրե՛ք ուրիշ առարկաների անունները.

Ո՞վ.— աշակերտ, բանվոր, ուսուցիչ...

Ո՞վ.— հայր, տատ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 152: Գտե՛ք և գրեցե՛ք այս բոլոր առարկաների անունները.




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 153: Կարդացե՛ք և արտագրեցե՛ք առարկաների անունները.

Գ Ի Ր Ք

Ասան տեսնեմ,
Իմ սիրուն գիրք,
Քեզ կսիրեմ,
Քան խաղ ու մերգ:
Այս ինչեր կան


Ծոցիդ մեջը.
Ճատան մկնիկ,
Ոսկի ձկնիկ,
Թիթեռ, բզեզ,
Իսկ ծաղկի պես,



Բաղ ու պուլիկ,
Գառն ու ուլիկ,
Կաքավ ու լոր,
Շլոր, սալոր,
Ասան, պատմիք
Իմ աղանջին,

Գու ծանոթ ես
Ամեն ինչին:
Իե, շնու պատմիք,
Իմ խելոք գիրք,
Քեզ կսիրեմ,
Քան խաղ ու մերգ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 154: Գրեցէ՛ք ինչ առարկաներ են.



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 155: Շարունակեցէ՛ք սլեւացնել առարկաների անուններ, որ ցույց տան.

- Մարդ.— ուսուցիչ, տղա...
- Բույս.— սինձ, մանուշակ...
- Թռչուն.— բազ, ծիծեռնակ...
- Միրգ.— տանձ, խաղող...

Մարդը, կենդանին, բույսը և բոլոր իրերը կոչվում են առարկա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 156: Արտագրեցէ՛ք տնային կենդանիների անունները և շարունակեցէ՛ք.

կով, գոմեշ, ձի, էշ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 157: Գրեցէ՛ք ինչպէս են կոչվում տնային կենդանիների ձագերը.

հորթ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 158: Արտագրեցէ՛ք և շարունակեցէ՛ք վայրի կենդանիների անունները:

առյուծ, վարաղ, շնագայլ, բորենի, ընձուղա, վագր...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 159: Արտագրեցէ՛ք և շարունակեցէ՛ք տնային թռչունների անունները.

հնդուհավ, սագ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 160: Արտագրեցէ՛ք վայրի թռչունների անունները և շարունակեցէ՛ք.

սոխակ, զեյձանիկ, փայտփորիկ, բուռ, կրուռնիկ, կկուռ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 161: Արտագրեցէ՛ք և շարունակեցէ՛ք ծառերի անունները.

արմավենի, նռնենի, բարդի, թխկի, կեչի, հաճարի, կաղնի...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 162: Գրեցէ՛ք մրգերի և բանջարեզենի անունները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 163: Գրեցէ՛ք գյուղատնտեսական մեքենաների և գործիքների անունները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 164: Գրեցէ՛ք դասական պիտույքների անունները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 165: Գրեցէ՛ք ձեզ շրջապատող առարկաների անունները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 166: Հարցերի փոխարեն զբե՛ք առարկաների անուններ.

Աշակերտը գրում է (ինչո՞վ)... (ի՞նչ)...
 Հյուանը սղոցում է (ինչո՞վ)... (ի՞նչ)...
 Տատը կանչում է (ո՞ւմ)...
 Շուշիկը հանդիպում է (ո՞ւմ)...
 Պապը նամակ ստացավ (ու՞մից)...


Առարկաների անունները պատասխանում են հետևյալ հարցերին.

ո՞վ, ի՞նչ, ո՞ւմ, ինչի՞, ինչի՞ն, ու՞մից, ինչի՞ց, ու՞մով, ինչո՞վ, ինչո՞ւմ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 167: Կարգացե՛ք և սացե՛ք, թե ի՞նչ հարցերի են պատասխանում առարկաների անունները: Արտագրեցե՛ք:

Ասարգուս ո՞ր եղանակն է
 ես ուկեցօժում եմ արարերը և
 կուսցնում հասկերի գլուխները:
 ես կախ եմ անում այգիներում
 քանիչ, խնչուր, դեղչ ու խաղող:
 ես եռարիկներին թուցնում եմ
 բներից և հանում մանուկներին
 քով անբառը, աղբյուրների մոտ,
 ապառ ասրերը:
 մ ի՞նչն ինչ չե՞մ սիրում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 168: Պատմեցե՛ք նկարի բովանդակութ՛յունը: Նույնը վրավոր շարագրեցե՛ք:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 169: Գրեցե՛ք այն բոլոր առարկաների անունները, որոնք դուք տեսնում եք նկարում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 170: Արտագրեցե՛ք առարկաների անունները.

Երբ աշունը գալիս է, կոլխոզը բերքը բաժանում է: Ով լավ է աշխատել, շատ մթերք է ստանում: Հայրս և մայրս ստացան ցորեն, կարաֆիլ, յուղ, պանիր, մեղր ու կաղամբ:


Մեր կովի հորթին ես եմ նայում. մաքրում եմ, ջրում եմ, խոտ եմ տալիս: Նրա անունը Ծագիկ է:

Կոլխոզի նախագահը տեսավ իմ հորթը, շատ հավանեց:

11. ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆ ԹԻՎԸ


Առարկաների անուններն ունենում են եզակի և հոգնակի թիվ:

Եզակի (մեկ առարկա)




տանձ


Հոգնակի (մեկից ավելի առարկաներ)



տանձեր



թիթեռ



թիթեռներ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 171: Լրացրե՛ք, կետերի անոցը զրկելով հոգնակիները:

Ասար	Ասարեր
Քասար	-----
Մխար	-----
Հուարիկ	-----
Վանուակ	-----

Եզակի թիվը ցույց է տալիս մեկ առարկա: Հոգնակի թիվը ցույց է տալիս մեկից ավելի նույն տեսակի առարկաներ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 172: Գրեցե՛ք նկարի բովանդակութունը. վերնադրեցե՛ք «Աշուն»:




ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 173: Որոշեցե՛ք՝ առարկա ցույց տվող բառը եզակի՞ է, թե՞ հոգնակի:

ՏԱՐՎԱ ՈՐ ԵՂԱՆԱԿՆ Ի


Ես գուշն գուշն ներկում եմ ծառերը և ճամփա գնում թռչուններին դեպի տաք երկրները: Ես լցնում եմ մառանները մրգերի կախաններով, չիր ու չամչով: Ես բաց եմ անում ձեզ համար դպրոցի դռները:

Մի՞թե ինձ չեք սիրում:


Հոգնակի թիվ կազմելիս՝ միավանկ բառերին ավելացնում ենք եր, իսկ բազմավանկ բառերին ներ վերջավորութ յունը:



վարդ



վարդեր



բանվոր
Պատեցե՛ք նկարի բովանդակութ յունը:



ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 174: Արտադրեցե՛ք առարկա ցույց տվող բառերը:

Կազմեցե՛ք եզակիների հոգնակին և հոգնակիների եզակին:

Գտե՛ք՝ ո՞ր բառերից հոգնակի չի կազմվի:

ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

Վ. Վարդանյան

Քնքուշ վարդերը բացվել են նորից,
Արևը պայծառ ժպտում է վերից,
Ծառերը բոլոր կանաչ են հագել,
Զան, կարմիր մայիս, բարով ես եկել:

Այ գրոշներով քայլում ենք, երգում,
Մեր ոտքերի տակ գետինն է թնդում,
Աղջիկ ու տղա գեղեցիկ զուգվել,
Ծաղկավաճ մայիս, բարով ես եկել:

Օգանավերը թռչում են ահա,
Մեր սերն են տանում դեպի Մոսկվա,
Մեր հայրենիքը հզոր է միշտ էլ,
Շողշողուն մայիս, բարով ես եկել:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 175: Դրեցե՛ք շարադրություն:

Մայիսի մեկը.

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 176: Կազմեցե՛ք հետևյալ միավանկ բառերի հոգնակին.

Եզակի

Հոգնակի

Օր	_____
Գետ	_____
Գոր	_____
Համ	_____
Միծ	_____

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 177: Կազմեցե՛ք հետևյալ բազմավանկ բառերի հոգնակին.

Միտեր	_____
Միտեր	_____
Միտի	_____
Միտ	_____
Մանուկ	_____
Մրտիկ	_____

Երբ բազմավանկ բառը վերջանում է ն-ով, նրա հոգնակին ունենում է երկու ն (նն). օրինակ՝ սեղան — սեղաններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 178: Որոշեցե՛ք՝ առարկա ցույց տվող բառերի հոգնակին ի՞նչ վերջավորություն ունի: Ո՞ր բառի հոգնակին ունի երկու ն և ինչո՞ւ:

ՏԱՐՎԱ ՈՐ ԵՂԱՆԱԿՆ Ի

Ես բերում եմ պայծառ արև ու տաք օրեր:
Երբ գալիս եմ, զաշտերն ունենում են զալար խոտեր, իսկ անտառները կանաչ տերևներ: Ես բե-

բում եմ ծաղիկներ ու թիթեռներ, բերում եմ սիրուն թռչուններ, որոնք գալիս են հեռու երկրներից:

Մի՞թե ինձ չեք սիրում:






ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 179: Գրեցե՛ք շարագրութ յուն: Վերնագիրը գրե՛ք «Գարուն»

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 180: Գրեցե՛ք հոգնակիրում ն ունեցող հինգ բառ:

12 ԱՌԱՐԿԱՅԻ ՈՐՊԻՍՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 181: Գրեցե՛ք հարցերի պատասխաններն ըստ նկարների.
 Ինչպիսի՞ սեղան ինչպիսի՞ մատիտ



(Վոքը մեծ . . . կարճ . . . երկար . . .)


Փոքր, մեծ, կարճ, երկար, ջանասեր, ծույլ և նման բառերը ցույց են տալիս առարկայի որպիսութ յունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 182: Գրեցե՛ք որպիսութ յուն ցույց տվող տասը բառ.
 լայն.

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 183: Կետերի տեղը գրե՛ք որպիսութ յուն ցույց տվող բառեր.
 դաշտ, արտ,
 կով, գառնուկ, պիտներ,
 տղա, ուլիկ, աղջիկ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 184: Գրեցե՛ք առարկա ցույց տվող տասը բառ՝ յուրաքանչյուրը որպիսութ յուն ցույց տվող մի բառի հետ. օրինակ՝ բարձր ծառ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 185: Կարգացե՛ք և գրեցե՛ք՝ ինչպիսի՞ գույներ ունի ծիածանը:



ԱՐԵՎՆ ՈՒ ԾԻԱԾԱՆԸ

Անձրեկից հետո ծագեց արևն ու ծիածան կապեցի
 — Նայի՛ր ինձ, քեզնից գեղեցիկ եմ, — ասաց
 ծիածանն արևին, — տես, քանի՛ գուլյն ունեմ. կա-
 նաչ, կարմիր, կապույտ, գեղին...

— Բայց գիտե՞ս, որ ես եմ քեզ այդքան գուլյն
 տվողը, — ասաց արևը:

— Դի՛ւ... սուտ է, — ժպտաց ծիածանը:

— Սի՛ւտ է, — ասաց արևն ու մտավ ամպի
 տակ:

Արևն ամպի տակ մտավ թե չէ, ծիածանն էլ
 անհետացավ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 186: Գրեցե՛ք շարադրություն.
 վերնագրեցե՛ք «Անձրեկից հետո»:


ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 187: Գտե՛ք որպիսություն ցույց
 տվող բառերը և գրեցե՛ք առարկաների անվան հետ.

Սովետական, հարազատ,
 Իմ սիրելի Հայրենիք,
 Հերոսներով քո անպարտ,
 Դու հզոր ես, անառիկ:

Հպարտ լուռներ կան քո մեջ,
 Կապույտ ծովեր անսահման,
 Զով անտառներ, թավ ու պերճ,
 Ձինջ աղբյուրներ քչքչան:

Որպիսություն ցույց տվող բառերը պա-
 տասխանում են ինչպիսի՞ հարցին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 188: Սրտադրեցե՛ք և ընդգծեցե՛ք
 որպիսություն ցույց տվող բառերը.



Մայիս
 Կի ու պիսան վաճ մայիս,
 Դու ամենից լավ ամիս,
 Կրակի ու արև տա ցույցիս,
 Ինչ սիրունն էս, զմն մայիս:

Հանգ ու այգի զարդարուն,
 Հովն է խաղում դաշտերում,
 Թռչուններն են քեզ գովում,
 Ի՞նչ նախշունն էս, լա՛վ մայիս:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 189: Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք որպիսությունն ցույց տվող բառերը:

Մի թռչունն կա պտակի,
 Մարմինն ունի կլորիկ,
 Կտուցը հաստ ու կարճլիկ,
 Ճկճկում է սիրունիկ:

Գտե՛ք՝ ո՞ր թռչունն է:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 190: Ինչպիսի՞ հարցի միջոցով գր-
 տե՛ք առարկայի որպիսությունը ցույց տվող բառերը և
 արտագրեցե՛ք առարկայի անվան հետ:

2. Թումանյան

Ի՞յ, կանաչ ախպեր,
 Ի՞յ ճանաչ ախպեր,
 Արի՛, քեզ հետ բեր
 Արևի շողեր:

Բե՛ր անուշահոտ
 Ծիլ, ծագիկ ու խոտ,
 Կարկաչուն վաակ,
 Երկինք կապուտակ,
 Խատուտիկ հավքեր,
 Ջրնգան երգեր,
 Գառների մայուն,
 Խաղ, ուրախություն...
 Ի՞յ, կանաչ ախպեր,
 Ի՞յ, ճանաչ ախպեր:

13. ԱՌԱՐԿԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 191: Կետերի անդը գրեցե՛ք, թե
 ի՞նչ է անում Գուրգենը:



Գուրգենը ...




Գուրգենը ...



Գուրգենը ...

Խաղում է, կարդում է, ուտում է բա-
 ռերը ցույց են տալիս առարկայի գործողու-
 թյունը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 192: Գրեցե՛ք, թե ի՞նչ է անում
ամեն մեկը:



Գործողութիւնն ցույց տվող բառերը պատասխանում են ի՞նչ է անում, ի՞նչ արեց, ի՞նչ անել և նման հարցերին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 193: Շարունակեցե՛ք բառացանկը՝
ավելացնելով առարկայի գործողութիւնն ցույց տվող
բառեր.

- Ի՞նչ է անում: Գրում է, լսում է...
- Ի՞նչ արեց: Գրեց, լսեց...
- Ի՞նչ անել: Գրել, լսել...
- Ի՞նչ անի: Գրի, լսի, տեսնի, տա...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 194: Արտագրեցե՛ք և տարկայի
գործողութիւնն ցույց տվող բառերի տակ զի՛ծ քաշեցե՛ք.




Գարուն
Գարունը եկամ,
Նորուն կարկաչեց,
Միխայիլ աղմուկով
Դը շուրջը լլբեց:

Թռչուններ եկան
Հեռու տեղերից,
Ուրախ ու զվարթ
Երգեցին նորից:

Արդեն ծառերը
 Ծաղկել են սիրուն,
 Մեղուներն ուրախ
 Հյութ են հավաքում:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ 195: Ի՞նչ հարցի են պատասխանում գործողությունն ցույց տվող բառերը.



Զմեռ

Զյուն ու ցուրտը եկավ,

Մուռ, գայլ լույս,

Եր սպիտակ գորգը

Զմեռը փուսեց:

Զյունը ծնկահար
 Նստեց մեր ճամփին:
 Մպիտակ հյուսերը
 Կիտեց գետափին:
 Ծառեր ու թփեր
 Զմեռն արծաթեց,
 Մար ու ձոր ընկավ,
 Կալեց ու կապեց:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ 196: Պատմեցե՛ք, «Զմեռվա գվարձությունները»:

ՎԱՐՃՈՒԹՅՈՒՆ 197: Գտե՛ք գործողությունն ցույց տվող բառերը և արտազրեցե՛ք, կողքին ավելացնելով հարցը. օրինակ՝ փորում ենք (ի՞նչ ենք անում)...



ԾԱՌԱՏՈՒՆԿ

Փոս ենք փորում,
 Ծառ ենք տնկում
 Ուրախ երգով ու կանչով,
 Որ մեծանա
 Ու ճյուղեր տա,
 Ծածկվի սիրուն կանաչով,
 Եվ երբ ամռան
 Արևը գա
 Իր շողերով շողշողուն,
 Ծառը սիրով
 Հանգիստ կտա
 Մեզ իր անուշ ստվերում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 198: Գրեցե՛ք շարագրություն.
 «Մեր ծառատունկը»:

14. ԿԵՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Ո՞րն է կարեվոր

- Վերջակետը լինում է նախադասության վերջում, վերջակետը շատ կարևոր է, — ասաց Արան:
- Չէ, ստորակետն է կարևոր, — մեջ մտավ Լենան:
- Միջակետն ու բութը ավելի կարևոր են, պարզում են միտքը, — պնդեց Աշոտը:
- Ուսուցիչը, որ լսում էր աշակերտաների վեճը, միջամտեց և ասաց.

— Կետադրության բոլոր նշաններն էլ կարևոր են, յուրաքանչյուրն իր տեղում: Առանց կետադրության նշանների չենք կարող լավ կարդալ և լավ գրել: Պետք է լավ գիտենալ կետադրությունը:

Կետադրության նշաններ՝ վերջակետ (:), ստորակետ (,), միջակետ (.), բութ ('), չակերտներ (« »), գիծ (-), հարցական նշան (?), բացազանչական նշան (!), շեղակետ ('), բազմակետ (...):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 199: Կարդացե՛ք և գտե՛ք կետադրության նշանները: Ինչպե՞ս են կոչվում:

ՈՎ ԱՇԽԱՏԻ, ՆԱ ԿՈՒՏԻ

Մի խրճիթում ապրում էին մուկիկը, ծիտիկը և հավիկը:

Մի օր, քղուջ անելիս, հավիկը մի հատիկ գտավ ու գոչեց.

— Հատիկ եմ գտել, հատիկ եմ գտել: Ո՞վ կտանի աղալու:

— Ես՝ չէ՛—ասաց մուկիկը:

— Ես էլ՝ չէ՛,—ասաց ծիտիկը:

Ի՞նչ աներ հավիկը: Հատիկը տարավ ջրաղաց, աղաց:

— Ալյուրն ո՞վ կտանի տուն,—հարցրեց հավիկը:

— Ես՝ չէ՛,—ասաց ծիտիկը:

— Ես էլ՝ չէ՛,—ասաց մուկիկը:

Հավիկը ալյուրը շալակեց ու տարավ տուն:

— Ո՞վ խմոր կանի,—հարցրեց հավիկը:

— Ես՝ չէ՛,—ասաց մուկիկը:

— Ես էլ՝ չէ՛,—ասաց ծիտիկը:

Հավիկը խմորը հունցեց:

— Թոնիրը ո՞վ կվառի, — հարցրեց հավիկը:

— Ես՝ չէ՛, — ասաց ծիտիկը:

— Ես էլ՝ չէ՛, — ասաց մուկիկը:

Հավիկը թոնիրը վառեց:

— Հացն ո՞վ կթխի, — հարցրեց հավիկը:

— Ես՝ չէ՛, — ասաց մուկիկը:

— Ես էլ՝ չէ՛, — ասաց ծիտիկը:

Հավիկը հացը թխեց և զրավ սեղանին:

— Հացն ո՞վ կուտի, — հարցրեց հավիկը:

— Ե՛ս, — գոչեց ծիտիկը և մոտեցավ սեղանին:

— Ե՛ս, — գոչեց մուկիկը և մոտեցավ սեղանին:

Հավիկը նրանց սեղանից հեռացրեց և ինքը մենակ կերավ հացը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 200: Գրավոր շարադրեցե՛ք. Ո՞վ աշխատեց, ո՞վ կերավ:

15. ԱՌՈԳԱՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 201: Ո՞ր բառն է հարց արաահայտում.



Ծիտը ծախն հարցրեց.

— Ո՞ւր է ճուտը, ծի՛տ:

Ճուտը գլուխը բնից հանեց և պատասխանեց.

— Ճի՛տ:

Հարց արաահայտող բառի վերջին ձայնավորի վրա զրվում է հարցական նշան (*):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 202: Կարգացե՛ք, գտե՛ք, թե որո՞նք են հարցնող բառերը, ի՞նչ նշան ունեն իրենց վրա: Կետադրության ուրիշ ի՞նչ նշաններ կան:

Երգում էր մարիկ Կկուն:

Մին էլ ըն՛ր՛, Ազվեսն եկավ,

— Էս սարը իմն է,

Էս ծառը իմն է,

Ծառում փչակ կա,

Փչակում՝ մի բուն,

Էս ո՞վ է եկել

Տիրացել թաքուն:

Ախ զուր Կկուն, հիմա՛ր Կկու,



Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
 — Երեք հատ ձագ, ազն Ազվես:
 — Երեք հատ ձագ ցույց կտամ քեզ:
 Ու չե՞ս ասել, դու, անամսթ,
 Մինք ծառա դրկես ինձ մոտ:
 Զգիր շուտով մի հատը ցած,
 Թե չէ կացինս հրեն սրած,
 Գնամ բերեմ,
 Ծառը կտրեմ...

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 203: Հետևյալ հարցերին պատասխանեցե՛ք լրիվ նախադասութ՞յուններով.


- Ի՞նչ է անուշը:
- Ի՞նչ է ազգանունը:
- Ո՞ր գյուղից կամ քաղաքից ես: . . .
- Քանի՞ տարեկան ես:
- Ո՞ր առարկայից հինգ կամ չորս
 թվանշան ունես:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 204: Տրված պատասխանների համար գրեցե՛ք լրիվ հարցեր.

.....
 Սովետական Բանակն է պաշտպանում մեր երկիրը:

 Ուզում եմ լինել օդաչու:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 205: Գտե՛ք՝ ո՞ր բառերն են շեշտված արտասանվում. ի՞նչ նշան կա նրանց վրա:



Կարդա՛, այ՛ իմ խելոյ մանուկ,
 Կարդա՛, գրիր փարփն բոլոր,
 Կարդայաչողի խելքն է կարուկ,
 Վիրտիք պայծառ ու լուսավոր:

Հրաման, զիմում կամ պահանջ արտահայտող բառերի վերջին ձայնավորի վրա դրվում է շեշտ ('):
 Շեշտ ունեցող բառն ուժեղ է արտասանվում:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 206: Արտագրեցե՛ք և ընդգծեցե՛ք շեշտ ունեցող բառերը:

Արևը. — Միրուն աղջիկ, ի՞նչ դրկեմ քեզ:
Աղջիկը. — Ես ծաղիկներ կուզեմ պես-պես:

Արևը. — Ա՛յ աղբյուրներ, այ գետակներ,
Սառցի տակին քնած եք դեռ:

Դուրս եկեք, գուրս,

Ե՛նչու գեպի լույս,

Նոր աշխուժով

Ու նոր ուժով

Կարկաչեցե՛ք

Ու կանչեցե՛ք

Հողում քնած սիրուններին,

Ծաղիկներին ու ծիլերին:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 207: Գտեք այն բառերը, որոնք
երկար են արտասանվում. ի՞նչ նշան կա նրանց վրա:

Ծաղիկները. — Բարև, բարև, կարմիր արև,

Ա՛խ, ի՞նչ լավ է գեպի վերև.

Ազատ, լույս, տա՛ք,

Կապույտ, հասակ...

Արևը. — Միրում եք ինձ...

Ծաղիկները. — Ա՛խ, այնպես եմ սիրում,
այնպես, էլ առանց քեզ չեմ ապրի ես...

Բառի երկար արտասանվող վանկի վրա
դրվում է բացազանչական կամ երկարացման
նշան ('):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 208: Արտագրեցե՛ք խոսակցու՞թյու-
նը և ընդգծեցե՛ք բացազանչական նշան ունեցող բա-
ռերը:

Մորթագանջ

փոքրիկ Մորթաշէտք շիջույ-
նեցով գնում էր չորով իրենց
հորթը փնտրելու:

Նրան բխայ, որ Տի ուրիշն
էլ է շիջույնում: Ի՞նչ խնայում
էրբայրն է, կանգնեց, չայն
տնայ:

- Գահանն, դո՛ւ ես:

- Ե՛ս...

- Մէք հորթն ո՛ւր գնայ, տե-
սայր:

- Մայր...

- Իսկու՞մք ես անում, ի՞նչ է:

- Չէ...



- Գնայ, էդ եր գեյր կուտրի:

- Ապրի...

Մորթաշէտք լայով վայելց
տուն, տեսում հորթն էլ է գա-
նը, ցահանն էլ:

Հարցական նշանը, շեշտը և բացազանչա-
կան նշանը (°, ' , ~) կոչվում են առոգանու-
թյան նշաններ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 209: Կարգացե՛ք և ցնւյց տվե՛ք,
թե ո՞ր բառն ի՞նչ նշան ունի, ինչպե՞ս պետք է կարգաւ



Ե Ս

Ազոավը բռնեց մի խեցզետին և նստեց ծառին:
Խեցզետինն ուզեց ազատվել նրա կտցից ու
ասաց նրան.

— Ոսկեհատիկ, ազոավ քույրիկ, հով է մեզ-
նից կեղտոտը:

Ազոավը սեղմեց կտուցը և կռուաց.

— Դո՛ւ...

— Ոսկեհատի՛կ, ազոավ քույրիկ, հով է մեզնից
նախշու՛նը:

Ազոավը բացեց կտուցն ու կռուաց.

— Ե՛ս...

Կտուցը բաց անելուն պես խեցզետինը կտցից
քնկավ ջուրը և ազատվեց:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 210: Գրեցե՛ք շարադրությա՛ն.
«Ազոավն ու խեցզետինը»:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 211: Ցո՛ւյց տվե՛ք և բացատրեցե՛ք
կետադրության նշանները. արտասանեցե՛ք ոտանավորը
համաձայն կետադրության նշանների:

ՕԴՍՁՈՒ

Ա. ՎԵՏՈՒՄԻ

— Ս՛յ օդաչու,
Գու քն՛ջ թռչուն,
Խիզնի բազե, ո՛ւր ես թռչում:
— Ո՛վ հարցասեր, խելոք մանուկ,
Կապույտ երկինքն է ինձ կանչում:

— Ս՛յ օդաչու,
Ինչպե՛ս թռչուն,
Ձին՛ջ երկինքովն ո՛ւր ես թռչում:

— Սլանում եմ արագ ու վեր,
Միշտ վեր ու վեր և հեռուներ:

— Ս՛յ օդաչու,
Անվանի թռչուն,
Ի՞նչ կա հեռվում, ո՛ւր ես թռչում:

— Գնամ, հսկեմ սահմանները,
Ձին՛ջ ու կապույտ մեր ծովերը:

— Ս՛յ օդաչու,
Հերոս թռչուն,
Իսկ առանց ինձ ո՛ւր ես թռչում:

— Դու կարիճ ես, բայց դեռ փոքր ես,
Կմեծանաս ու կթռչես:

16. ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 212: Կարգացե՛ք հողվածը և պատմեցե՛ք:

ՉՈՐՍ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Միքայելը սահնակով սահել էր սառցապատ բլրից, չմուշկներով վազվզել սառած գետի վրա: Նա տուն վերադարձավ կարմրած, ուրախ և հորն ասաց:

— Որքան ուրախ է ձմեռը: Ես կուզենայի, որ միշտ ձմեռ լիներ:

— Գրե՛ր քո ցանկությունն իմ ծոցատետրում, — ասաց հայրը:

Միքայելը գրեց:

Եկավ գարունը: Միքայելը ազատ վազվզում էր գույնզգույն թիթեռների ետևից, կանաչ մարդագետնում ծաղիկներ էր քաղում. և հոր մոտ վազելով ստում:

— Ի՛նչ հրաշալի է գարունը: Ես կուզենայի, որ միշտ գարուն լիներ:

Հայրը նորից ծոցատետրը հանեց: Միքայելը գրեց:

Եկավ ամառը: Միքայելը հոր հետ գնաց դաշտ: Նա ամբողջ օրն ուրախանում էր. ձուկ որսաց, վայրի պղտուղներ հավաքեց, թավալկեց բուրավետ խոտերի վրա, իսկ երեկոյան հորն ասաց:

— Ես կցանկանայի, որ ամառը վերջ չունենար:

Այդ ցանկությունը ևս Միքայելը գրեց տետրում:

Եկավ աշունը: Այդին լցվեց կարմիր խնձորներով ու գեղին տանձերով: Միքայելը հիացած ստում էր հորը:

— Աշունը տարվա բոլոր եղանակներից ամենալավն է:

Այդ ժամանակ հայրը ծոցատետրը հանեց և ցույց տվեց տղային, որ նա նույն բանն ասել է թե՛ ձմեռանը, թե՛ դարնանը և թե՛ ամառնը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 213: Արտագրեցե՛ք չորս նախադասություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 214: Գտե՛ք և արտագրեցե՛ք ութ միավանկ բառ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 215: Գտե՛ք և արտագրեցե՛ք հինգ բազմավանկ բառ՝ բաժանելով վանկերի:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 216: Կարգացե՛ք առաջին տողը և որոշեցե՛ք՝ քանի՞ հնչյուն ունի ամեն մի բառ, քանի՞ ձայնավոր, քանի՞ բաղաձայն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 217: Գտե՛ք՝ ո՞ր բառերն են սկզբում մեծատառով և ինչո՞ւ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 218: Արտագրեցե՛ք այն բառերը, որոնք սկսվում են ե, է, օ, ղ գրերով:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 219: Արտագրեցե՛ք այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկա:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 220: Արտագրեցե՛ք այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի որպիսություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 221: Արտագրեցե՛ք այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի գործողություն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 222: Արտագրեցե՛ք այն բառերը, որոնք ցույց են տալիս եղակի թիվ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 223: Արտագրեցե՛ք առարկաների այն անունները, որոնք հոգնակի են: Ընդգծեցե՛ք հոգնակի վերջավորությունները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 224: Գտե՛ք և ցո՛ւյց տվե՛ք կետա-
դրության բոլոր նշանները:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 225: Գրեցե՛ք վեցական բառ, որոնց
մեջ գրվում է բ, գ, դ, է, զ, ը, թ, յ, բայց կարգացվում է
փ, ք, թ, ց, չ, լ:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ 226: Գրեցե՛ք օ, ո, ե գրերով սկսվող
հինգական բառ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. Խոսք	8
2. Նախադասություն	5
3. Բառ և վանկ	13
4. Հնչյուն և տառ	20
5. Տողադարձ	41
6. Մեծատառ	50
7. Բառակազմություն	55
8. Բառադիտություն	59
9. Ուղղագրություն	60
10. Առարկայի անուն	76
11. Առարկայի անվան թիվը	82
12. Առարկայի որպիսություն	89
13. Առարկայի գործողություն	93
14. Կետագրության նշաններ	98
15. Առոգանության նշաններ	100
16. Կրկնողական վարժություններ	108

Խմբագիր՝ Գ. Սեվակ
Տեխն. խմբագիր՝ Ա. Լարոյան
Կոնսրոլ սրբագրիչ՝ Ա. Միքսյան

ՎՁ 02556, Պատվեր՝ 304, Տիրած՝ 30 000:
Հեղ. 2,5 մամ.: Հրատ. 4,2 մամ.: Տպագ. 7 մամ.:
Հանձնված է արտագրության 23/III 51 թ.:
Ստորագրված է տպագրության 19/VI 51 թ.:
Գինը 1 ո. 60 կ.:

Հայպոլիգրաֆերատի վարչության № 1 տղարան,
Երևան, Ալավերդյանի փող. № 65, 1951 թ.:

[The text on this page is extremely faint and illegible due to fading or bleed-through from the reverse side. It appears to be a list or table of contents with multiple columns.]



«Ազգային գրադարան»



NL0233960

6702

9562 1 0. 60 4.

†.